ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» ու «Պողպատե կոնստրուկցիաներ» ՀՀ շինարարական նորմերի մշակման (տեղայնացման) աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/21 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 06.11.2017 թ կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/21 պայմանագրում 2018 թվականի հոկտեմբերի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1	Կատարողի կողմից ներկայացված գրությունը՝ 2018թ. նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի երկարացման վերաբերյալ:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 12.02.2018թ. կնքված համաձայնագիր N 2-ի 1.2 կետում <<հոկտեմբերի 31-ը>> բառերը փոխարինվել են <<նոյեմբերի 30-ը>> բառերով:
Փոփոխության հիմնավորում	N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/21 գնման պայմանագրի 7.5 կետը:

Պատվիրատու՝ ***ՀՀ քաղաքաշինության կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

06.11.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/21 գնման պայմանագրի

ք. Երևան 19.10.2018 թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ռեկտոր Գ. Գալստյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» ու «Պողպատե կոնստրուկցիաներ» ՀՀ շինարարական նորմերի մշակման (տեղայնացման) աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 06.11.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/21 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 12.02.2018թ. կնքված համաձայնագիր N 2-ի 1.2 կետում <<հոկտեմբերի 31-ը>> բառերը փոխարինել <<նոյեմբերի 30-ը>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ Հ/Հ 900011019099,
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
ք. Երևան, Տերյան 105,
<<Արարատբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 15100-01964940200,
ՀՎՀՀ 01506385

Տնօրեն՝

---------- Գ. Գալստյան
(ստորագրություն)

Կ.Տ.